Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

3 (1402) • 25 հունվարի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ



# 02 Շաբաթաթերթ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

## Ներքին անվտանգության վարչությունը 16 տարեկան է





Հունվարի 20-ին լրացավ ոստիկանության ներքին անվտանգության վարչության կազմավորման 16-ամյակը: Այդ կապակցությամբ ստորաբաժանում այցելեց ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Շնորհավորելով ոստիկանության ներքին անվտանգության վարչության ծառայողներին ստորաբաժանման կազմավորվան տարեդարձի կապակցությամբ՝ ոստիկանության պետը մաղթեց բարի ծառայություն՝ ի շահ մեր պետության ու ոստիկանության:

Վալերիյ Օսիպյանը վարչության կազմավորման տարեդարձի առթիվ եւ ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարելու համար ներքին անվտանգության վարչության պետին եւ մի շարք ծառայողների պարգեւատրեց մեդալներով, կրծքանշաններով, պատվոգրերով:

Ոստիկանության պետը հույս հայտնեց, որ պարգեւերներն ավելի կպարտավորեցնեն ծառայողներին՝ իրականացնելու արդյունավետ ծառայություն:

Ներքին անվտանգության վարչությունը ստեղծվել է 2003 թ. հունվարի 20-ին: Ունի երեք բաժին՝ ծառայողական քննությունների, օպերատիվ ապահովման եւ հաշվառման ու վերլուծության: Վարչության թիվ մեկ խնդիրը ոստիկանության համակարգում կարգապահությանն ու օրինականության ապահովմանն ուղղված ներքին վերահսկողությունն է:

## Ամփոփիչ խորհրդակցություն

Հունվարի 23-ին տեղի ունեցավ ոստիկանության Երեւան քաղաքի վարչությունում տեղի ունեցավ 2018 թ. օպերատիվ-ծառայողական գործունեության արդյունքների ամփոփում, որը վարում էր վարչության պետ Գարիկ Ղուկասյանը:



Վարչության պետի տեղակալ Անդրանիկ Իսկանդարյանը ներկայացրեց մայրաքաղաքում հանցավորության շարժընթացի եւ հիմնական միտումների վիճակագրությունը, հանցագործությունների եւ կասեցված հանցագործությունների բացահայտման աշխատանքները:

Նշվեց, որ անցած 12 ամիսներին Երեւան քաղաքում արձանագրվել է վարույթներում գտնվող քրեական գործերով եւ նյութերով անցնող 13251 հանցագործության դեպք՝ նախորդ տարվա 11685-ի դիմաց: Միեւնույն ժամանակ, բացահայտման աշխատանքերի արդյունավետությունը նախորդ տարվա համեմատ աճել է 5,7%-ով, իսկ միջին հանրապետական ցուցանիշի համեմատ՝ 11,1%-ով:

Անդրադառնալով հասարակական հնչողություն ունեցող հանցատեսակներին՝ զեկուցողը նշեց, որ արձանագրվել է, մասնավորապես, սպանության դեպքերի նվազում՝ 21 դեպք՝ նախորդ տարվա 25-ի դիմաց:

Ոստիկանության տարածքային բաժինների պետերը ներկայացրին իրենց ստորաբաժանումների աշխատանքը, առկա խնդիրները, արվեցին աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

Ամփոփելով խորհրդակցությունը՝ Գարիկ Ղուկասյանը հավաստեց, որ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության եւ ենթակա տարածքային ստորաբաժանումների ղեկավարներն ու անձնակազմը կձեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ՝ բացթողումներն ու թերությունները շտկելու ուղղությամբ՝ շարունակելով հետեւողական աշխատանքը հանցավորության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու համար:

## Անավարտ հարձակում սուպերմարկետում

Հունվարի լույս 17-ի գիշերը ավազակային հարձակման փորձ էր կատարվել մայրաքաղաքում: Բաղրամյան պողոտայի սուպերմարկետ էր մտել գլխարկով եւ ակնոցով մի երիտասարդ, աշխատակցից գումար պահանջել՝ սպառնալով զենքով ու պայթուցիկով պայթեցնել սուպերմարկետը: Աշխատակիցը չէր կատարել պահանջը, երիտասարդն էլ ատրճանակի նմանվող առարկա էր պարզել նրա ուղղությամբ եւ հեռանալով՝ պահանջել, որ իրեն չհետեւեն:




Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության եւ Արաբկիրի բաժնի ծառայողները, համագործակցելով ոստիկանության այլ ստորաբաժանումների գործընկերների հետ, ձեռնարկեցին օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Պարզվեց սուպերմարկետ մտած անձի ինքնությունը:

20-ամյա Աշոտ Մեջլումյանը հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանություն, ապա ներկայացվեց Արաբկիրի քննչական բաժին:

Խուզարկությամբ նրա բնակարանից հայտնաբերվեցին ատրճանակ եւ ինքնաշեն պայթուցիկ սարքի նմանվող փաթեթավորված տարա:

Նախաքննությունը շարունակվում է:

## Ավազակություն ու կողոպուտ «varks.am»-ում

Հունվարի 21-ի առավոտյան դիմակավորված անձը մտել էր «varks.am» վարկային կազմակերպության Կոմիտասի պողոտայի մասնաճյուղ եւ դանակի սպառնալիքով հափշտակել 1 միլիոն դրամ:



Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության եւ Արաբկիրի բաժինների ծառայողները, ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ժամերի ընթացքում պարզեցին կասկածյալի ինքնությունը: Հայտնաբերվեց ու ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկվեց Երեւանի բնակիչ, 25-ամյա Սամուել Ֆարմանյանը:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները, համագործակցելով ոստիկանության տարածքային ստորաբաժանումների հետ, բացահայտեցին նաեւ հունվարի 21-ին «varks.am»-ի Քանաքեռցու փողոցի մասնաճյուղում կատարված ավազակությունը:

էջ 2

## Կողոպտել էին ժողովրդական արտիստին



Դեկտեմբերի 30-ին ոստիկանության տարածած տեսանյութում երեւում էր, ինչպես երկու տղամարդ Աբովյան եւ Իսահակյան փողոցների խաչմերուկի գետնանցումի աստիճանների վրա հափշտակում են ժողովրդական արտիստ Ռաֆայել Քոթանջյանի դրամապանակն ու փախչում:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվեց հանցագործությունը կատարած անձանց ինքնությունը: Հունվարի 17-ին ոստիկանները Նորագյուղ թաղամասում հայտնաբերեցին Վրաստանի քաղաքացի Ա. Շամիլովին: Շարունակվում են հանցակցին՝ Վրաստանի քաղաքացի Ա. Անանիկյանին հայտնաբերելու միջոցառումները:

## Հրացանավոր մարդը



2015 թ. օգոստոսի 26-ն էր, կեսգիշերն անց: Կոտայքի մարզի գյուղերից մեկում հնչած կրակոցներին րոպեներ անց հետեւեցին հիվանդանոց սլացող «շտապօգնության» մեքենայի շչակները...

Ահազանգը ոստիկանություն հիվանդանոցից էր. հրազենային վնասվածքով բուժօգնության էր տեղափոխվել 32-ամյա տղամարդ: Օպերատիվ խումբը հիվանդանոց էր մեկնել, բայց տուժողը վիրահատարանում էր. նրանից տեղեկություն ստանալն անհնար էր:

Տուժողի մարմնական վնասվածքները որակվեցին ծանր. նա տեղափոխվեց մայրաքաղաքի 1-ին համալսարանական հիվանդանոց:

էջ 3

### Կաթված՝ գողության պահին



*Տարածքում տուժողի ու նրա աղջկա ոտնահետքերից բացի, այլ ոտնահետք չէր նկատվում:*

էջ 2

### Ավազակություն՝ կողոպուտի նպատակով



*Կողոպտված ու արյունլվա տղամարդուն հիվանդանոց տեղափոխեցին պատահական մարդիկ:*

էջ 6

### Բռնվեց երեք տարի անց



*Թիրախ ընտրած երկու անլույս տներն էլ մտել էր պատուհանի փեղկը լինգի օգնությամբ բացելով:*

էջ 7

## Հաղորդումը կեղծ էր



Հունվարի 8-ին ոստիկանության Նոր Նորքի բաժնում Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի աշխատակիցը հանցագործության մասին հաղորդում տվեց: Նրա հայտնածով՝ հունվարի 6-ին, ժամը 18.30-ի սահմաններում, Նոր Նորքի Գյուրջյան փողոցի իրենց շենքի շքամուտքում իրեն են մոտեցել երեք հոգի: Երկուսը խփել են իրեն՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Այդ ընթացքում նրանցից մեկը սպառնացել է իր եւ ընտանիքի անդամների կյանքին եւ առողջությանը վնաս պատճառել, եթե աշխատանքից ազատվելու դիմում չներկայացնի:

Հաղորդում տված տղամարդը ոստիկաններին հայտնել էր նաեւ, որ միջադեպի ընթացքում իր գրպանից դրամապանակն ընկել է, ինչը իրեն խփող անձանցից մեկը վերցրել է: Դրամապանակում եղել են փող, բանկային ու կուտակային քարտեր: Նա նշել է նաեւ մի անձի եւ հայտնել, որ տղամարդիկ ուղարկվել են նրա կողմից:

Հաղորդումն ընդունելուց հետո ոստիկանության Նոր Նորքի բաժնի քրեական հետախույզները ձեռնամուխ եղան կատարվածի հանգամանքները պարզելու եւ հաղորդում տվողին ծեծած անձանց հայտնաբերելու գործընթացին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հայտնի դարձավ, որ հաղորդում տված տղամարդուն ոչ ոք չի ծեծել, պահանջներ ներկայացրել կամ դրամապանակը հափշտակել: Այլ կերպ ասած՝ հանցագործություն չէր կատարվել:

Հաղորդում տված տղամարդը հրավիրվեց բաժին, այս անգամ՝ բացատրություն տալու: Խոստովանեց, որ հաղորդումն իրականությանը չի համապատասխանում. պատմությունը հորինել էր: Դրամապանակը հափշտակելու հանգամանքը ճշմարտանման դարձնելու նպատակով էլ դրամապանակը նետել էր աղբանոց, իսկ պարունակությունը՝ պահել:

Կատարվում է քննություն:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

## Ավազակություն ու կողոպուտ «varks.am»-ում

Սկիզբը՝ էջ 1



Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց ավազակություն կատարած եւ 1 միլիոն 188 հազար դրամ հափշտակած անձի ինքնությունը: Աբովյան փողոցում ոստիկանները հայտնաբերեցին Երեւանի բնակիչ Ադամ Բաղդասարյանին ու բերման ենթարկեցին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին, որտեղ նա տվել է խոստովանական բացատրություն:

Հիմնավորվել է, որ Ադամ Բաղդասարյանը հունվարի 5-ին կողոպուտ է արել նաեւ Հալաբյան փողոցի նույն վարկային կազմակերպության մասնաճյուղում՝ հափշտակելով մոտ մեկուկես միլիոն դրամ, իսկ հունվարի 14-ին կողոպուտ էր արել դարձյալ նույն վարկային կազմակերպության Դավիթաշենի մասնաճյուղում՝ այս անգամ հափշտակելով մոտ 1 միլիոն 800 հազար դրամ:

Ադամ Բաղդասարյանը կալանավորվել է:

## Կաթված՝ գողության պահին



Հունվարի 11-ին ոստիկանության Արմավիրի բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից ահազանգ ստացվեց. հայտնում էին, որ Արմավիրի նախկին հացի գործարանում գողություն է կատարվել, պահակին խփել են: Օպերատիվ խումբը դեպքի վայր շտապեց:

Արտադրամասերից մեկում իրավապահները հայտնաբերեցին պահակի՝ Գեղեցիկ Գաբրիելյանի դին: Տպավորությունն այնպիսին էր, ասես հրել էին կամ ինքն էր արտադրամասի աստիճանահարթակից ընկել: Վնասված էր գլուխը, ձեռքին քերծվածքներ կային: Աղջիկն էր նրան գտել այդ վիճակում: Պետք էր պարզել, թե ինչ էր իրականում կատարվել:

Դեպքի հանգամանքները պարզելու նպատակով ոստիկաններն արտադրամասի տարածքում համապատասխան ուսումնասիրություններ կատարեցին:

Դիակն ուղարկվեց փորձաքննության:

Դեպքի վայրում հայտնաբերվեց դանակ, կտրված պղնձե մալուխներ, որոնք չէին հասցրել հափշտակել: Տարածքում տուժողի ու նրա աղջկա ոտնահետքերից բացի, այլ ոտնահետք չէր նկատվում: Արտադրամասի դուռը վնասված չէր:

Ավելի ուշ ստացվեց նաեւ դատաբժշկի եզրակացությունը՝ Գաբրիելյանը մահացել էր սրտի կաթվածից:

Հետագա միջոցառումներով քրեական հետախույզները պարզեցին, որ նշված գործարանի պահակ Գեղեցիկ Գաբրիելյանը դստեր՝ Հրածին Գաբրիելյանի հետ, գողություն կատարելու նպատակով, մտել էին գործարանի արտադրամաս, որտեղ Գեղեցիկ Գաբրիելյանը սրտի կանգ ունենալու հետեւանքով մոտ 5 մետր բարձրությունից ընկել եւ մահացել էր: Որոշել էր իրեն վստահված տարածքից գողություն անել ու մահացել էր այն արտադրամասում, որտեղ մտնելու իրավունք չուներ: Այս փաստը կոծկելու համար էր Հրածին Գաբրիելյանը հորինել գողերի գործարան մտնելու ու մորը խփելու պատմությունը:

Կատարվում է քննություն:

**Գոռ ՎԱՆՅԱՆ**

## Վրեժ մեքենայից



Հունվարի 18-ին լրատվական կայքերից մեկում տեսանյութ էր հրապարակվել, որի մեջ երեւում էին, որ մի քանի երիտասարդ, իջնելով «Օպել» մակնիշի ավտոմեքենայից, կոպիտ կերպով խախտելով հասարակական կարգը եւ բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ՝ հարվածում են մի «Մերսեդես»-ի: Դեպքը կատարվել էր Երեւանի Ազատության պողոտայի եւ Նաիրի Զարյան փողոցի խաչմերուկում:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները, օպերատիվ տվյալներն իրացնելով, բերման ենթարկեցին Երեւանի բնակիչներ Սեւրոբ Հովհաննիսյանին, որն «Օպելի» վարորդն է, Տիգրան Կարապետյանին, Ալբերտ Հովհաննիսյանին եւ Կարո Սարգսյանին:

Պարզվել է, որ կրակոց արձակած անձը 23-ամյա Ռոբերտ Շանոյանն է, իսկ մյուս մասնակիցը՝ Գարեգին Ստեփանյանը, որոնք բացատրական աշխատանքների շնորհիվ ներկայացել են ոստիկանություն եւ տվել խոստովանական բացատրություն:

Նախնական տվյալներով՝ միջադեպի պատճառը խաչմերուկում իրար չզիջելն ու ձայնային ազդանշան տալն էր:

Հարուցվել է քրեական գործ:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

## «Երկուսը քաղաքում»



**Կասկածանքով ոստիկանություն բերման ենթարկված երիտասարդները գողության քսան դեպք էին հեղինակել: Առաջին ահազանգը դեկտեմբերի 17-ին էր: Հասարակական կազմակերպություններից մեկի աշխատակիցը հայտնում էր, որ իրենց գրասենյակից գողացել են դյուրակիր համակարգիչ:**

**Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները զննեցին դեպքի վայրը, վերծանեցին տարածքի խցիկների արձանագրածը: Կադրում երեւացող երկու երիտասարդներից մեկը գողանում էր համակարգիչը: Երիտասարդներից մեկին ոստիկաններն անմիջապես ճանաչեցին. նախկինում դատապարտված Էդգար Հովհաննիսյանն էր: Ճշտեցին նաեւ մյուս կասկածյալի ինքնությունը՝ Նարեկ Սարգսյան: Ձեռնարկվեցին օպերատիվ-հետախուզական ու որոնողական աշխատանքներ:**

**Հունվարի 9-ին Նարեկ Սարգսյանը հայտնաբերվեց Չարենցի փողոցում, իսկ Էդգար Հովհաննիսյանը՝ Երեւանի հյուրանոցներից մեկում:**

**Նարեկ Սարգսյանը նույնպես նախկինում դատապարտվել էր գողության համար ու նոյեմբերին համաներմամբ ազատ էր արձակվել:**

**Ոստիկաններն ունեին վերջերս Երեւանում կատարված գողությունների տեսագրություններ: Կադրում կրկին նրանք էին: Բացատրական աշխատանքի շնորհիվ, նաեւ անհերքելի փաստերի ճնշման տակ խոստովանեցին, որ Երեւանի տարբեր վարչական տարածքներում կատարել են 20 գողություն:**

**Պարզվեց, որ վերջին շրջանում Էդգար Հովհաննիսյանն ու Նարեկ Սարգսյանը գողություններ էին արել Վարդանանց, Սարյան, Պարոնյան, Օրբելու, Թումանյան, Պռոշյան փողոցներում, Մաշտոցի պողոտայում եւ 1-ին մասի գեղեցկության սրահներից, Սայաթ-Նովայի փողոցի ծաղկի խանութից, տարբեր փողոցների գրասենյակներից, դպրոցներից, կլինիկայից ու ավտոտնակից:**

**Փաստերի առթիվ հարուցվել է քրեական գործ:**

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

## Բնակարանագողը թոռն էր



Էջմիածին քաղաքի Չարենցի փողոցի շենքերից մեկում բնակարանային գողություն էր կատարվել: Օգտվելով տանտիրուհու բացակայությունից՝ համապատասխան բանալիով բացել էին բնակարանի դուռը, հափշտակել 3 միլիոն 750 հազար դրամ եւ 3 հազար դոլար:

Գողության մասին ահազանգը ոստիկանության Վաղարշապատի բաժնում հնչեց դեկտեմբերի 30-ին: Մի քանի օր որդու տանն անցկացրած կինն այդ օրն էր միայն նկատել, որ փողը չկա:

Փականը վնասված չէր, փունը տակնուվրա չէին արել: Գազօջախի միջից էին գողացել փողը, ինչը հուշում էր, որ բնակարանագողը տան նիստուկացին ծանոթ էր:

Հաղորդումից օրեր անց հանցագործությունը բացահայտվեց: Պարզվեց, որ բնակարանային գողությունը կատարել է տուժողի թոռը՝ Արթուր Սարկիսյանը: Հարազատների հետ տարված բացատրական աշխատանքի արդյունքում հունվարի 10-ին նա ներկայացավ ոստիկանության Վաղարշապատի բաժին:

Գիտեր, թե տատը որտեղ է փողերը պահում, ուներ բնակարանի բանալին եւ, օգտվելով առիթից, որ նա իրենց տանն է, որոշել էր ծրագրածն իրականացնել:

Հարուցվել է քրեական գործ:

**Գ. Վ.**

## Աշխատանքի հրավեր ոստիկանությունում

ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կրտսեր խմբի թափուր պաշտոններում ծառայության անցնելու համար հրավիրվում են.

- Հայաստանի Հանրապետության մինչեւ 30 տարեկան արական սեռի այն քաղաքացիները, ովքեր անցել են պարտադիր զինվորական ծառայություն, ունեն առնվազն միջնակարգ կրթություն, իրենց անձնական հատկանիշներով, առողջական վիճակով եւ ֆիզիկական պատրաստականությամբ ունակ են կատարելու ոստիկանության ծառայողի պարտականությունները,
- ՀՀ ոստիկանությունում եւ այլ գերատեսչություններում զինվորական ծառայություն անցած, վերջին 5 տարիների ընթացքում ծառայությունից ազատված արական սեռի նախկին ծառայողները:

Ցանկացողները կարող են դիմել ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կադրերի եւ անձնակազմի հետ տարվող աշխատանքների բաժին (ք. Երեւան, Խանջյան 51, հեռ. 010 59-62-78, 010 59-69-91) յուրաքանչյուր աշխատանքային օր, ժամը 10.00-ից մինչեւ 13.00-ն եւ 14.00-ից մինչեւ 17.00-ն:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Հրաշանավոր մարդը

Սկիզբը՝ էջ 1



Մինչ բժիշկները պայքարում էին երիտասարդի կյանքը փրկելու համար, քրեական հետախույզները ձեռնամուխ եղան հանցագործության բացահայտմանը:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեցին կատարվածի որոշ հանգամանքներ: Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվեցին պարկուճներ, իսկ մի քանի մետր հեռավորությամբ՝ նաեւ որսորդական հրացան, որը, ըստ նախնական տվյալների, հանցագործության գործիքն էր:

Կեսգիշերին գյուղի ծայրամասում կատարվածի ականատես վկաներ հայտնաբերելը գրեթե անհնար էր, հարցումները որեւէ արդյունք չտվեցին: Բացահայտման բանալին քրեական հետախույզների ձեռքին էր, եւ ձեռնարկված ծավալուն միջոցառումների արդյունքը չուշացավ:

...Համագյուղացիներ Գուրգեն Դալլաքյանի ու Վաղինակ Սարգսյանի տարաձայնությունը տարիների պատմություն ուներ: Հարեւանությամբ գտնվող հանդամասերի վիճահարույց տարածք կար, ու ամեն տարի ով առաջինը հասնում՝ հնձում էր: Այդ օրը Վաղինակը զանգեց Գուրգենին եւ խնդրի շուրջ խոսելու համար կանչեց իր տուն: Գուրգենը, որ հասցրել էր հնձել հանդամասը, կոպտեց՝ պարզելու հարց չունի ու միշտ էլ ինքն է հնձելու:

Հեռախոսային խոսակցությունը եզրափակեցին հայհոյանքներով: Իսկ հաջորդ օրը պատահաբար հանդիպեցին գյուղի սկզբնամասում: Մեկը քաղաքից էր գալիս, մյուսն ինչ-որ տեղ էր գնում: Լեզվակռիվը վեճ դարձավ, վեճը՝ քաշքշուկ: Հայհոյեցին, անպատվեցին իրար: «Հանդիպումն» ամփոփեց Գուրգեն Դալլաքյանը: Մեքենայի սրահից վերցրեց որսորդական հրացանն ու կրակեց հեռացող Վաղինակի ուղղությամբ... Հարցը լուծված համարելով՝ գնաց տուն, իսկ առավոտյան իմանալով, որ Վաղինակին «շտապօգնության» մեքենայով տեղափոխել են հիվանդանոց, նրա վիճակը ծանր է, եւ, ամենակարեւորը, ի վիճակի չէ հաղորդում տալու, մեկնեց Ռուսաստանի Դաշնություն:

Մինչ Վաղինակ Սարգսյանն ի վիճակի կլիներ հայտնել իր հետ կատարվածի հանգամանքները, ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ ոստիկանների տեսադաշտում հայտնվեց կասկածյալը, հետո արդեն նաեւ Վաղինակ Սարգսյանի հաղորդմամբ հիմնավորվեց ծանր մարմնական վնասվածք պատճառողի ինքնությունը: Բայց նա արդեն Հայաստանում չէր:

Գեւորգ Դալլաքյանին հայտնաբերելու ուղղությամբ հետախուզում հայտարարվեց: Քրեական օրենսգրքի 112 հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործի վարույթը կասեցվեց՝ հանցանքը կատարած անձի գտնվելու վայրի անհայտ լինելու հիմքով:

Կատարվածից երկու տարի անց հանրապետությունից մեկնեց նաեւ Վաղինակ Սարգսյանը: Բնակություն հաստատեց Ռուսաստանում: Այդ լուրն առնելուց հետո Գուրգեն Դալլաքյանը որոշեց վերադառնալ Հայաստան: Մտածում էր՝ ժամանակը մոռացության է տվել ամեն ինչ, մանավանդ, որ տուժողն արդեն Հայաստանում չէր:

Սխալվեց: Քրեական գործն ընդամենը կասեցվել էր, իսկ իր նկատմամբ հետախուզումը շարունակվում էր: Համոզվեց, երբ Բագրատաշենի սահմանային անցակետից բերման ենթարկվեց ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք, որտեղից էլ՝ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչություն:

Քրեական գործի վարույթը վերսկսվել է: Գեւորգ Դալլաքյանը կալանավորվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Գողություն դպրոցից



Հունվարի 9-ին Կոտայքի մարզի Նոր Արտամետ գյուղի դպրոցի տնօրենը ոստիկանության Նաիրիի բաժնում հաղորդում տվեց, որ հունվարի 8-ից 9-ն ընկած ժամանակահատվածում, դուռը կոտրելով, մուտք են գործել դպրոց, հետո կոտրելով տնօրենի աշխատասենյակի դուռը՝ գողացել են համակարգիչ, էլեկտրական ջեռուցիչներ, հեռախոս:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվեց, որ նշված հանցանքը կատարել են նույն դպրոցի աշակերտներ Վազգենն ու Վլադիմիրը:

Վլադիմիրը ներկայացվել է ոստիկանության Նաիրիի բաժին եւ խոստովանել, որ հունվարի 8-ին, ժամը 22-ի սահմաններում, Նոր Արտամետ գյուղի դպրոցից գողություն են արել, նաեւ հայտնել է, որ հունվարի 8-ին, ժամը 21-ի սահմաններում, գողություն են արել նաեւ Նոր Արտամետ գյուղի բուժամբուլատորիայից:

Դեպքի վայրի զննությամբ դպրոցի հետնամասի հողատարածքից հայտնաբերվել են հափշտակած համակարգիչը, էլեկտրական ջեռուցիչները, հեռախոսը, իսկ աշակերտներից մեկը ներկայացրել է բուժամբուլատորիայից գողացած էլեկտրական սարքավորումների մարտկոցները:

Բացատրական աշխատանքի շնորհիվ բաժին է ներկայացել նաեւ Վազգենն ու տվել խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

# Գողության փորձ տերմինալից



**Հունվարի 14-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի ծառայողները գիշերային շրջիկ ծառայության ընթացքում Ավետիսյան փողոցից, գողության փորձ կատարելու կասկածանքով, ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկեցին 17-ամյա Էրիկին:**

**Պարզվեց, որ ժամը 2.30-ի սահմաններում նա ընկերոջ հետ տեխնիկական միջոցների գործադրմամբ կոտրել է Հրաչյա Քոչարի եւ Գյուլբենկյան փողոցների խաչմերուկի վճարային տերմինալի դիմային հատվածը եւ փորձել գողություն կատարել, սակայն իրենց կամքից անկախ հանգամանքներում չեն կարողացել ավարտին հասցնել հանցագործությունը, դիմել են փախուստի:**

**Ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները ժամեր անց պարզեցին Էրիկի ընկերոջ ինքնությունը՝ 17-ամյա Կարապետն էր: Նա ներկայացվեց ոստիկանություն եւ տվեց խոստովանական բացատրություն:**

**Կատարվում է քննություն:**

**Նարեկ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Պարեկայինները բռնեցին փախչող գողին



Հունվարի լույս 12-ի գիշերը Ավանից Առինջ գյուղ տանող ճանապարհին «Օպել» մակնիշի ավտոմեքենա էր կայանված եղել: Լուսադեմին մեքենայի տերն աղմուկից արթնացել էր ու հասկանալով ինչ է կատարվում՝ ահազանգել էր 1-02:

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից ահազանգը նախ հաղորդվեց Ավանում գիշերային ուժեղացված ծառայություն իրականացնող պարեկային ոստիկաններին, ապա՝ տարածքային ստորաբաժանում:

Դեպքի վայրում պարեկախմբերը ոչ ոքի չհայտնաբերեցին: Տեղեկություն կար, որ ապակին կոտրած անձը մեքենայով էր փախել: Պարեկայինները «սանրեցին» տարածքը՝ վստահ, որ հեռու փախչել չէր կարող: Արդյունքում՝ Ավանի Աչխաբադի փողոցում նրանց տեսադաշտում հայտնվեց առանց համարանիշերի սլացող «Օպել»:

Հետապնդումը եւս արդյունավետ էր. հենց Աշխաբադի փողոցում «Օպել»-ը կանգնեցվեց ու, վարորդով հանդերձ, բերման ենթարկվեց ոստիկանության Ավանի բաժանմունք:

Բերման ենթարկված Վոլոդյա Գասպարյան հատուկ էր համարանիշերը հանել՝ տեսախցիկների տեսագրելուց խուսափելու համար: Նա հայտնեց, որ Ավանից Առինջ տանող փողոցում կայանված «Օպել»-ի ապակին կոտրել է, գողացել ղեկի պատյանը, փորձել է գողանալ նաեւ մարտկոցը, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չի հասցրել, փախել է: Ընդ որում, փախչելիս իր մեքենայով բախվել է թիրախ ընտրած մեքենայի թափարգելին:

Ոստիկանության Նոր Նորքի բաժնում հետաքննություն է կատարվում:

# Գողության փորձ «Հայփոստ»-ից



Հունվարի լույս 7-ի գիշերը մի երիտասարդ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էր Արշակունյաց պողոտայի «Հայփոստ»-ի բաժանմունքի պատուհանն ու ներս մտել՝ հափշտակություն կատարելու դիտավորությամբ:

Անվտանգության ձայնազդանշանային համակարգը միացել էր: Աշխատակիցներից մեկը, արագ կողմնորոշվելով, ահազանգել էր ոստիկանություն: Նախքան ոստիկանության Կենտրոնական բաժնի հերթապահ օպերատիվ խումբը կհասներ դեպքի վայր, Հանրապետության հրապարակում գիշերային ծառայություն իրականացնող պարեկային ոստիկանները շտապել էին Արշակունյաց պողոտա:

Փոստային բաժանմունք մտած անձը, իր կամքից անկախ հանգամանքներում հանցագործությունն ավարտին չհասցնելով, հեռացել էր տարածքից, սակայն պարեկայինները Արշակունյաց պողոտայի եւ Քրիստափորի փողոցի խաչմերուկում բռնել էին նրան:

Կենտրոն վարչական շրջանը սպասարկող պարեկապահակետային ծառայության գնդի 1-ին գումարտակի ծառայողների կողմից կասկածանքով ոստիկանության Կենտրոնական բաժին բերման ենթարկվածը 29-ամյա Գեւորգ Համբարձումյանն էր: Խուզարկությամբ նրա մոտից հայտնաբերվեցին պտուտակահան, ձեռնոցներ ու դանակ: Գեւորգ Համբարձումյանը իրավապահներին հայտնել է, որ Երեւանի տարբեր վարչական շրջաններում ինը գողություն եւ գողության փորձ է արել:

Արձանագրենք, որ եւս մեկ հանցագործություն թարմ հետքերով բացահայտվեց ոստիկանների ուժեղացված ծառայության արդյունքում:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# «Ամառային» գողություններ



Ոստիկանության Նաիրիի բաժնի քրեական հետախույզները հունվարի 11-ին Աբովյան քաղաքի Երիտասարդական փողոցից, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկեցին 48-ամյա Արարատ Զ.-ին, որը 2018 թ. հուլիս-օգոստոս ամիսներին Եղվարդ քաղաքից եւ հարակից համայնքներից գողացել էր ավտոմեքենաների մարտկոցներ, շինարարական գործիքներ եւ այլն:

Ձեռնարկված միջոցառումներով պարզվել է, որ Արարատ Զ.-ն 2018 թ. օգոստոսին գնացել է Եղվարդի Սաֆարյան 23 տուն, տարեց տանտիրոջը ներկայացել որպես որդու ընկեր եւ, չարաշահելով նրա վստահությունը, նկուղից գողացել փականներ, էլեկտրական պտուտակահան ու սղոց:

Պարզվել է նաեւ, որ Արարատ Զ.-ն նույն ժամանակահատվածում այցելել է Նոր Գեղի գյուղի Արցախի 3 տուն եւ 77-ամյա տանտիրոջից ծանրամուրճ խնդրել, իսկ հետո, օգտվելով նրա անուշադրությունից, գողացել է բակի էլեկտրական մարտկոցը:

Կատարվում է քննություն:

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

# Միրահարվածություն՝ հետեւանքներով



Պեմզաշեն գյուղի տներից մեկում խնջույք էր. երեխա էր ծնվել:

Երաժիշտներից մեկը՝ Մանվելը, նվագելիս նկատել էր մի աղջկա, որից աչքը չէր կտրում. հավանել էր: Միջոցառումից հետո էլ անծանոթուհուն մտքից հանել չէր կարողանում: Որոշեց նրան որոնել սոցիալական կայքերում: Փնտրտուքը արդյունք տվեց: Սկսեց նամակներ գրել, որոնց բովանդակությունը զարմացրեց հասցեատիրոջը եւ այդ մասին տեղեկացրեց ամուսնուն՝ Արտյոմին, նա էլ եղբորը՝ Սուրենին:

Սուրենը որոշեց բացահայտել նամակագրին: Մեկ այլ կայքով պատասխանեց նրան՝ ասելով, որ կարող են շփվել այդ հարթակում: Մանվելը բանից անտեղյակ՝ մի քանի նամակ եւս գրեց, որոնց պատասխանները չուշացան: Ուղարկեց նաեւ իր լուսանկարը: Սուրենը ճանաչեց նրան: Արտյոմի հետ մտածեցին, թե ինչ պատրվակով հանդիպեն ու պարզաբանում պահանջեն:

Մանվելին տեղեկացրին, որ ինչ-որ առիթի համար երաժիշտներ են հարկավոր: Այդ օրը նա Ախուրիկ գյուղում էր՝ բարեկամի տանը: Եղբայրները գնացին նրան տեսնելու: Ախուրիկից էլ ուղեւորվեցին Պեմզաշեն: Ճանապարհին Սուրենը Մանվելին ցույց տվեց նրա ուղարկած լուսանկարը եւ նամակները: Սուրենն ու Արտյոմը ծեծեցին Մանվելին: Սուրենի հերթական հարվածը դանակով էր, որն էլ վերջակետ դրեց պարզաբանմանը:

Գյումրիի բժշկական կենտրոնից տեղի իրավապահները տեղեկացան, որ վնասվածքներով բուժօգնության է տեղափոխվել Երազգավորս գյուղի բնակիչ Մանվել Մինասյանը:

Կատարվածով նյութեր նախապատրաստվեցին: Մանվելին պատճառվել էր թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ քայքայումով: Դիմողի բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

# «Ազգակցական» պարտք ու պահանջ



Դիլիջանցի Վահրամ Ղարիբյանը տարիներ առաջ մեկնեց Ռուսաստան՝ արտագնա աշխատանքի: Ամիսներ անց Ռուսաստան մեկնեց նաեւ եղբոր որդին՝ Վարդանը: Վահրամը նրան ներգրավեց շինարարական աշխատանքներում՝ պայմաններ ստեղծելով գումար վաստակելու համար: Վարդանը ապրում էր Վահրամի տանը: Երկու տարի միասին աշխատեցին:

2016 թվականի ընթացքում կատարած աշխատանքի դիմաց ստացած գումարը Վարդանին չբավարարեց: Այդ հարցի շուրջ տարաձայնություններ ունեցան, ինչի հետեւանքով նրանց հարաբերությունները սառեցին: Վարդանը բնակարան վարձեց եւ առանձնացավ:

Դիլիջան վերադառնալուց հետո Վարդանը հորեղբորից պարբերաբար պահանջում էր պարտքը: Վահրամն էլ փորձում էր ապացուցել, որ պարտք չի նրան: Վարդանը հորեղբորը հիշեցնում էր այդ մասին զանգերի, հաղորդագրությունների, տեսակապի միջոցով: Երկուսն էլ Դիլիջանում էին բնակվում, բայց չէին հանդիպում: Վարդանը նաեւ սպառնում էր հորեղբորը՝ եթե պարտքը չտա, նրան եւ ընտանիքին վնաս կպատճառի:

Կատարվածի մասին տեղեկացան ոստիկանության Դիլիջանի բաժնի աշխատակիցները: Վարդան Ղարիբյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 137 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանք, սակայն դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

**Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# Խարդախություն. «ինտելեկտուալ» հանցագործություն

Հիմնականում խարդախության դիմում են նրանք, ովքեր ցանկանում են հեշտ ճանապարհով փող վաստակել: Թեեւ այս հանցատեսակի դեպքում տուժողն անմիջական կապի մեջ է մտնում հանցագործի հետ, սակայն այդ հանգամանքը տուժողին որեւէ առավելություն չի տալիս: Խարդախները հիմնականում լավ դերասաններ են եւ կարողանում են հեշտությամբ վստահություն ներշնչել, նպատակին հասնելու համար որեւէ խտրականություն չեն դնում միջոցների մեջ:

Խարդավանքի զոհ չդառնալու կարեւոր պայմանն է՝ չվստահել նրան, ով առաջարկում է պահանջվող ծառայության, գործարքի կամ ապրանքի ամենահեշտ ու մատչելի տարբերակը. ինչպես ասում են՝ «Ձրի պանիր միայն թակարդում է լինում»: Եվ այսպես, որպեսզի ձեր ժամանակն ու միջոցները անտեղի չվատնեք՝ հարկ է խուսափել բարեհաճ անծանոթներից, ովքեր առավել բարենպաստ գործարքներ կամ իրական արժեքից մի քանի անգամ էժան ապրանք կառաջարկեն. ուշադիր եղեք՝ վերջին դեպքում հնարավոր է, որ առաջարկվող ապրանքը գողացված կամ շարքից դուրս եկած լինի:

Հաճախ խարդախներն իրենց ապահովագրելու համար ապագա տուժողներին առաջարկում են օրենքը շրջանցող տարբերակներ՝ վստահ լինելով, որ տուժողը հետագայում կվախենա եւ իր այդ անօրեն քայլի համար չի դիմի իրավապահ մարմիններին:

Ժամանակին հաճախ կարելի էր հանդիպել փողոցային վիճակախաղերի, որոնց կազմակերպիչների նպատակը մեկն էր՝ խարդավանքով դրամ կորզել: Ներկայումս այդ խաղային բիզնեսը մեզ մոտ վերացել է, սակայն հնարավոր են նմանատիպ



իրավիճակներ օտար բնակավայրերում, այնպես որ, անհրաժեշտ է հեռու մնալ այդ կարգի մոլեխաղերից: Սկզբում նորեկ խաղացողին հնարավորություն է տրվում որոշակի գումար շահել, բայց այդ հաջողության հիմնական նպատակը նրա գրպանները դատարկելն է:

Որեւէ իր վաճառելիս նույնպես անհրաժեշտ է ուշադիր լինել. խարդախները կարող են ապրանքը գնել ձեզ համար ձեռնտու գնով, իսկ ավելի ուշ պարզվի, որ վճարված գումարը պակաս է, այսինքն՝ փողի մի մասը չկա: Նման իրավիճակներում խարդախը վճարում է, փողը հաշվելուց հետո պարզում եք, որ պայմանավորվածից քիչ է, խարդախը «զարմացած» հետ է վերցնում փողը, հաշվում, բացահայտում պակասը եւ ձեր աչքի առաջ ավելացնում, սակայն իրականում հաշվելիս աննկատ կապոցից հանում է ավելի մեծ գումար, իսկ դուք, վստահելով, ամաչում եք դրամը կրկին հաշվել:

Անծանոթների հետ գործարք կատարելիս երբեք փողը կամ ապրանքը, անգամ կարճ ժամանակով, նախապես մի տվեք նրանց: Հավատացեք, շատ հնարավոր է, որ ընդամենը մի քանի վայրկյանում անհետանան, կամ ձեր փողի փոխարեն վերադարձնեն կեղծը:

Թանկարժեք ապրանքի հայտարարություն հրապարակելիս խուսափեք հասցեն նշելուց, ավելի լավ է էլեկտրոնային հասցե նշել կամ բջջային հեռախոսի համարը:

Տարադրամ փոխանակեք դրա համար նախատեսված վայրերում, քանի որ նախ այդ գործարքի փողոցային տարբերակն անօրինական է, եւ, բացի այդ, մեծ է կողոպտվելու կամ խաբվելու հավանականությունը:

Երբեք անծանոթներին ոչ մի պատճառաբանությամբ մի վստահեք բանալիներ, փող, փաստաթղթեր, պայուսակներ: Աշխատեք հատկապես օդանավակայաններում խուսափել օտար անձանց գույքը ձեզ մոտ ժամանակավորապես պահելուց կամ տեղափոխելուց. չի բացառվում, որ այդ գույքի մեջ օրենքից դուրս ապրանք լինի, եւ դուք հետագայում լուրջ պրոբլեմների հանդիպեք: Մի գայթակղվեք ձեռքի վրա առաջարկվող էժան ապրանքներով:

*Շարունակելի*

**Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ**

# Ձվարճալի ամփոփագիր

## Ամանորի թյուրիմացություն

Հաղորդվել էր 80-ամյա մի տղամարդու ավտոտնակից 18 կգ խոզի միս գողանալու մասին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում նրա որդին հայտնել է, որ ինքը եւ կինը, ավտոտնակից վերցնելով խոզի ծխեցրած երկու բուդ, մեկնել են Երեւան՝ դստեր Ամանորը շնորհավորելու եւ այդ մասին հորը տեղյակ չեն պահել: Որդին նաեւ ներկայացրել է խոզի բդերը՝ ոստիկաննների՞ն, թե՞ հորը համոզելու համար:



## Գողը գողից գողացավ

Հետիոտնային անցումի մոտ 36-ամյա Արտակը գողացել է մի կնոջ դրամապանակը եւ դիմել փախուստի: Կինը հետապնդել է Արտակին, որը մոտակա շուկայի մոտ զգալով, որ կբռնվի՝ նետել է դրամապանակը: Բայց այստեղ էլ դրամապանակը գողացել է մի ուրիշ տղամարդ:

Ոստիկանները բերման են ենթարկել Արտակին, նա տվել է բացատրություն եւ բաց թողնվել: Ձեռնարկվում են միջոցառումներ երկրորդ գողի ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

## Հարսը

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ փափուկ հյուսվածքների սալջարդով բուժօգնության է դիմել 30-ամյա մի կին: Նա հայտնել է, թե ընկել է:

Պարզվել է, որ վիճաբանության ժամանակ նրա եւ ամուսնու հոր միջեւ առաջացել է քաշքշուկ. նա ոտքով խփել է սկեսրայրի ոտքին, իսկ կոշիկ հագնելու թիակով՝ մարմնին: Այստեղ միջամտել է ամուսնու մայրը: Սկեսուրը հրել է հարսին, նա էլ ձեռքով հարվածներ է հասցրել սկեսուրի ձեռքերին՝ պատճառելով վնասվածք:

Բոլորն էլ հրաժարվել են հաղորդում տալուց:

## Ժամանակ չի անցկացրել

25-ամյա Սարգիսը հաղորդում է տվել, որ անցած տարվա ամռանը սրճարանում իր հետ ժամանակ անցկացնելու նպատակով երկու անգամ ընդհանուր 20 հազար դրամ է տվել 33-ամյա մատուցողուհուն, բայց նա չի հանդիպել իր հետ եւ խարդախությամբ տիրացել է գումարին:

Տղան հավելել է, որ մատուցողուհին սոցէջում իր լուսանկարներով էջ է բացել եւ անվայել գրառումներ արել, ինչը ջնջելու համար իրենից պահանջել եւ մոր միջոցով իրենից ստացել է 40 հազար դրամ, այնուհետեւ «Ինստագրամ» կայքէջում իր անվամբ, նկարներով եւ անվայել գրառումներով բացած էջը ջնջելու համար իրենից կրկին պահանջել է 60 հազար դրամ: Եվ այս ամենը՝ առանց ժամանակ անցկացնելու...

# www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ հունվարի 17-ից 24-ը ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 45 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, 1-ը՝ ծեծի, 1-ը՝ ծնողի կողմից երեխային պահելուց չարամտորեն խուսափելու, 1-ը՝ կողոպուտի, 1-ը՝ կողոպուտի եւ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 4-ը՝ գողության, 1-ը՝ գողության փորձի, 4-ը՝ խարդախության, 1-ը՝ խարդախության փորձի եւ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ խարդախության եւ կաշառք տալու փորձին հանցակցելու, 2-ը՝ յուրացնելու կամ վատնելու, 1-ը՝ համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակության, 1-ը՝ կեղծ սնանկության, 1-ը՝ պոռնկագրական նյութեր կամ առարկաներ տարածելու, 1-ը՝ իրացնելու կամ պատրաստելու նպատակով թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի եւ դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու, 2-ը՝ առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության, 1-ը՝ կաշառք ստանալու, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 1-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու եւ պետական սահմանն ապօրինի հատելու, 1-ը՝ դասալքության համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 59 ճանապարհատրանսպորտային պատահար. 4 մարդ զոհվել է, 78-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 14 դեպք. 14 մարդ ստացել է մարմնական վնասվածքներ:

## Հանրապետության ճանապարհներին

Հունվարի 20-ին Երեւանի Բագրատունյաց պողոտայում իրար են բախվել «Ֆոլքսվագեն» եւ «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենաներ, հետո բախվել են կայանված «Նիսան» մակնիշի ավտոմեքենայի, այնուհետեւ «Ֆոլքսվագեն»-ի վարորդը վրաերթի է ենթարկել մեքենայի հետեւում կանգնած «Մերսեդես»-ի 25-ամյա ուղեւորին, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 20-ին անհայտ ավտոմեքենայի վարորդը Երեւանի Սեբաստիայի եւ Րաֆֆու փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 23-ամյա քաղաքացուհու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 21-ին Երեւանի Արշակունյաց պողոտայում իրար են բախվել «Մերսեդես», «Օպել» եւ «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենաներ: «Ֆորդ»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 21-ին Երեւան-Գյումրի ճանապարհի 78-րդ կմ-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան բախվել է քարե արգելապատնեշներին. վարորդը եւ ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Հունվարի 22-ին «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենան Արաքս-Սարդարապատ ճանապարհի 3-րդ կմ-ին դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել: Ուղեւորուհին տեղում մահացել է, իսկ վարորդը եւ չորս ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ ուղեւորուհիներից եւս մեկը, գիտակցության չգալով, մահացել է:

■

Հունվարի 22-ին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Արտաշիսյան փողոցում վրաերթի է ենթարկել 59-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 22-ին Երեւանի Աթոյան եւ Ռուստովյան փողոցների խաչմերուկում իրար են բախվել «ԲՄՎ» եւ «Նիսան» մակնիշի ավտոմեքենաներ. «Նիսան»-ի 42-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 22-ին «Միցուբիշի» մակնիշի ավտոմեքենայի վարորդը Երեւանի Բաբաջանյան եւ Անդրանիկի փողոցների խաչմերուկում վրաերթի է ենթարկել 36-ամյա քաղաքացուհու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 21-ին Երեւանի Քանաքեռի 1-ին փողոցում իրար են բախվել «Մերսեդես» եւ «ԳԱԶել-322132» մակնիշի ավտոմեքենաներ. «ԳԱԶել-322132»-ի 39-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով դիմել է հիվանդանոց:

■

Հունվարի 22-ին Հայանիստ-Հովտաշատ ճանապարհի 1-ին կմ-ին «Ֆորդ Տրանզիտ» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենայի: Վերջինիս 48-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 22-ին Էջմիածին քաղաքի Մաշտոցի փողոցում «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել ճամփեզրի պատին. վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Հունվարի 22-ին Տաշիր քաղաքի Երեւանյան-Լճափնյա փողոցների խաչմերուկում իրար են բախվել «ՎԱԶ-217030» եւ «ՎԱԶ-21074» մակնիշի ավտոմեքենաներ. «ՎԱԶ-21074»-ի 49-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով դիմել է հիվանդանոց:

■

Հունվարի 22-ին Տավուշի մարզի Հաղթանակ-Պտղավան ճանապարհի 2-րդ կմ-ին իրար են բախվել «Օպել Աստրա» եւ «Օպել Զաֆիրա» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել Զաֆիրա»-ի վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

## Առաջին չեկիստը. լեգենդ եւ իրականություն

***Ֆելիքս Ձերժինսկու՝ Ռուսաստանի բոլշեւիկյան կուսակցության խոշորագույն ներկայացուցիչներից մեկի եւ Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) հիմնադրի մասին բազում գրքեր ու հոդվածներ են գրվել, բայց պատմաբանները դժվարանում են միանշանակ ներկայացնել նրա կերպարը: Մի կողմից՝ «հեղափոխության ասպետ», մյուս կողմից՝ «ահաբեկչության առաքյալ», մի կողմից՝ լեհ ազնվականի զավակ, մյուս կողմից՝ կասկածելի ծագումնաբանություն, տնտեսության եւ ֆինանսների խոշոր մասնագետ եւ ծույլիկ աշակերտ, որ նույնիսկ միջին կրթություն չունի:***

***Ո՞վ է, վերջապես, Ֆելիքս Ձերժինսկին, ում մասին ասում են, որ վաղաժամ է ծնվել, մանուկ հասակում երազում էր ոչնչացնել «մոսկալներին», անպատասխան սիրո պատճառով սպանել է իր քրոջը եւ պատրաստվում էր կուսակրոն քահանա դառնալ...***



Ֆելիքս Ձերժինսկին ծնվել է 1877 թ. սեպտեմբերի 11-ին, Բելառուսի Վիլնոյի նահանգի Օշմյանի գավառի Ձերժինո փոքրիկ կալվածքում: Սա հանրահայտ փաստ է, դժվարություններն սկսվում են, երբ պատմաբանները փորձում են պարզել նրա ծնողների տոհմաբանությունը:

Մոր հարցում հանգամանքները փոքրիշատե հստակ են. Հելենա Յանուշեւսկայան է, որը ծագում էր հայտնի լեհ ազնվականական ընտանիքից: Նրա հայրը՝ Իգնատի Յանուշեւսկին, Պետերբուրգի երկաթուղային ինստիտուտի պրոֆեսոր էր, առանձնատուն ուներ Վիլնոյում, որտեղ էլ ապրում էր ընտանիքը:

Ձերժինսկու հոր հարցում ամեն ինչ պատված է առեղծվածի քողով:

Հելենան տարիներ անց իր արդեն հասուն երեխաներին նրա՝ Էդմունդ-Ռուֆիմ Իոսիֆի Ձերժինսկու մասին մասնավորապես պատմել է. «Ձեր հորը առաջին անգամ մեր տուն բերեց ծեր հրեա կոշկակարը, որը կոշիկ էր կարում մեր ընտանիքի համար: Իոսիֆը պատահմամբ նրա հետ ծանոթացել էր փողոցում, երբ Պետերբուրգի համալսարանն ավարտելուց հետո եկել էր Վիլնո՝ աշխատանք փնտրելու: Վիլնոյի դպրոցներում ուսուցչի ազատ տեղ չկար, ու նա չգիտեր՝ ինչպես վարվի»:

Հայտնի չէ ինչպես կդասավորվեր նորավարտ ուսուցչի ճակատագիրը, եթե պրոֆեսոր Յանուշեւսկին նրան չառաջարկեր մաթեմատիկա պարապել իր դստեր հետ: Ամեն դեպքում, հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ հնարամիտ «պան ուսուցիչը» կարճ ժամանակ անց արդեն պրոֆեսորի փեսան էր:

Նորաստեղծ ընտանիքը բնակություն հաստատեց Ձերժինո կալվածքում: Նրանց տունը, լուսանկարներից դատելով, ավելի շատ գյուղական խրճիթ է եղել, քան ուսուցչին ու պրոֆեսորի փեսային վայել առանձնատուն:

Ըստ ընտանեկան ավանդության՝ Ֆելիքսը վաղաժամ է ծնվել. մայրը նկուղի բաց դռնակից ընկնում է ու կորցնում գիտակցությունը: Տղան ժամանակից շուտ է ծնվում, ու քանի որ ողջ էր մնացել, անվանակոչվում է Ֆելիքս՝ Երջանիկ:

Ֆելիքս Ձերժինսկին տասը տարեկանում ընդունվում է Վիլնոյի առաջին գիմնազիան, որը հեղինակավոր ուսումնական հաստատություն էր: Բայց վատ էր սովորում. երկու անգամ մնում է առաջին դասարանում, իսկ յոթերորդում կռվում է ուսուցիչների հետ եւ ընդմիշտ թողնում գիմնազիան: Թերի գիմնազիական կրթության վկայականից ակնհայտ է, որ Ձերժինսկին անբավարար գնահատականներ է ունեցել ռուսերեն ու հունարեն լեզուներից, մյուս առարկաներից՝ «երեքներ», եւ միայն կրոնի պատմությունից՝ կայուն «չորս»: Ձերժինսկին, որը ողջ կյանքում փորձում էր ինքնակրթությամբ լրացնել այդ բացը, խոստովանել է, որ գիտելիքների պակաս ունի, ինչը փորձում էր փոխհատուցել աշխատասիրությամբ ու համառությամբ:

Պատանեկության տարիներին Ձերժինսկին մոլեռանդությամբ հավատում էր Աստծուն եւ նույնիսկ պատրաստվում էր կաթոլիկ քահանա դառնալ: Իսկ ընդհանրապես, ինչպես լեհերի մեծ մասը, դաստիարակվել էր Ռուսաստանի եւ ռուսների հանդեպ ատելության ոգով, ինչը հատկապես սրվեց ռուսական զորքերի կողմից 1831 եւ 1863 թվականների լեհական ապստամբությունները դաժանորեն ճնշելուց հետո: Հետագայում Ձերժինսկին հիշում էր, որ երազում էր անտեսանելի դարձնող գլխարկ ունենալ, որպեսզի առանց բռնվելու վտանգի ոչնչացներ բոլոր «մոսկալներին», ինչպես ռուսներին կոչում էին Ուկրաինայում ու Լեհաստանում: Հեղափոխությունից հետո նա մասամբ իրականացրեց իր երազանքը՝ «հեղափոխության թշնամիների» զանգվածային գնդակահարություններով...

Նրա կյանքում եղել է եւս մեկ ողբերգական փաստ: Ժամանակակիցների վկայությամբ՝ Ֆելիքս Ձերժինսկին տասնութ տարեկանում կրքոտ սիրահարվում է քրոջը՝ Վանդային: Սերն անպատասխան էր, եւ Ֆելիքսը որսորդական հրացանով սպանում է նրան: Այս դեպքը նախաքննությամբ որսի ժամանակ տեղի ունեցած դժբախտ պատահար որակվեց, չնայած հայտնի էր, որ պատանին որսորդությամբ հրապուրված չէր:

*Շարունակելի*

## Դահիճը



Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո մանրամասներ ի հայտ եկան Վասիլի Բլոխինի մասին: Պարզվեց՝ նա եղել է ԽՍՀՄ ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի (ՆԳԺԿ) գնդակահարությունների մեջ մասնագիտացած դահիճը: Ստույգ հայտնի չէ, թե անձամբ քանի մարդ է գնդակահարել. նշվում է 10-15 հազար մարդ:

Ծնվել է 1898 թ., Վլադիմիրի նահանգի Գավրիլովսկոյե գյուղում: Երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, զորակոչվում է բանակ: Մարտերից մեկի ժամանակ վիրավորվում է եւ ուղարկվում թիկունք՝ բուժվելու: 1918 թ. անդամագրվում է բոլշեւիկյան կուսակցությանը եւ ծառայության անցնում Ստավրոպոլում՝ Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի (ՉԿ) զորքերի 62-րդ գումարտակում: Կարգապահ ու անձնվեր աշխատակից էր Բլոխինը, չէր խորշում ցանկացած աշխատանքից:

Բլոխինի առավելությունը մոլեռանդ նվիրվածությունն էր բոլշեւիկյան կուսակցությանը: Իր վրա էր վերցրել «սեւ աշխատանքը»՝ հարցաքննությունների ժամանակ ուժի գործադրումը եւ «ցանկալի» ցուցմունք ստանալը: Դա աննկատ չմնաց ղեկավարությունից, եւ շուտով Բլոխինը նշանակվեց հատուկ նշանակության ջոկատի դասակի հրամանատարի օգնական, ապա՝ այդ ստորաբաժանման հրամանատար:

1924 թ. հուլիսին Բլոխինին տեղափոխում են Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ) կոլեգիային առընթեր հատուկ նշանակության 61-րդ դիվիզիա՝ որպես հրամանատարի օգնական, իսկ մեկ ամիս անց նշանակում են ՊՔՎ կոլեգիային առընթեր Հատուկ բաժանմունքի կոմիսար: Արդեն կարող էր պաշտոնապես իրականացնել մահապատիժները:

1925 թ. աշնանից սկսում է ակտիվ գործել՝ իր ստորագրությունը դնել ոչ միայն մահապատժի դատապարտվածների ցուցակների վրա, այլեւ անձամբ ի կատար ածել:

1926 թ. Բլոխինին նշանակում են ՊՔՎ պարետի պաշտոնում: Նրա նախորդը՝ Կառլ Վեյսը, լրտեսության մեղադրանքով դատապարտվել էր 10 տարվա բանտարկության: Բլոխինը տեղյակ էր Վեյսի ճակատագրին, ուստի իրեն թույլ չէր տալիս որեւէ ավելորդություն, ինչը կարող էր իրեն վարկաբեկել, իսկ իր «սեւ աշխատանքը» կատարում էր անթերի: Ղեկավարությունը գոհ էր: Նման վերաբերմունքը հնարավորություն է տալիս Բլոխինին սովորել ինժեներատեխնիկական աշխատակիցների որակավորման բարձրագույն ինստիտուտում, սակայն չի ավարտում դասերին հաճախելու ժամանակ չունենալու պատճառով:

Բլոխինը հատուկ ուշադրություն էր դարձնում գնդակահարող խմբի (հատուկ խումբ) ձեւավորմանը: Այդ ստորաբաժանումը համալրվում էր ՊՔՎ կոլեգիային առընթեր հատուկ ստորաբաժանումից, այսինքն այն մարդկանցից, որոնք ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության, այդ թվում՝ Ստալինի պահապաններն էին:

Դահճի աշխատանքը պահանջում էր հատուկ պատրաստություն: Ստորաբաժանման նախկին աշխատակից Ալեքսանդր Եմելյանովը հիշում է. «Օղի էին խմում մինչեւ գիտակցությունը կորցնելը: Այն աստիճանի էինք հոգնում, որ հազիվ էինք ոտքի վրա մնում: Լվացվում էինք օդեկոլոնով մինչեւ գոտկատեղ, հակառակ դեպքում չէինք ազատվի արյան ու վառոդի հոտից: Նույնիսկ շներն էին հեռու մնում մեզնից եւ հաչում էին հեռվից»:

Նման ծառաբեռնվածությանը Եմելյանովը երկար չդիմացավ: Նրան ազատեցին ծառայությունից՝ հետեւյալ ձեւակերպմամբ. «Ընկեր Եմելյանովը թոշակի է ուղարկվում հիվանդության (շիզոֆրենիա) պատճառով, ինչը կապված է բացառապես երկարատեւ օպերատիվ աշխատանքի հետ»: Նման օրինակները զանգվածային բնույթ էին կրում, ոմանք մահանում էին, ոմանք՝ խելագարվում: Հայտնի է, որ գնդակահարողների ստորաբաժանման անդամ Գրիգորի Բլոխինը մահացել է 1930 թ. հոկտեմբերին, իսկ նրա գործընկեր Յոհան Յուսիսը՝ 1931 թ.: Նրանցից քչերը կարողացան գոյատեւել մինչեւ 1940-ական թվականների սկզբը:

***Շարունակելի***

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

***Ավազակությունը սեփականության դեմ ուղղված հանցագործություն է, որի համար պատիժ է սահմանում քրեական օրենսգրքի 175 հոդվածը: Յոդվածում հանցատեսակն այսպես է ներկայացված՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով:***

***Ավազակությունը ծանր հանցագործություն է, ուստի խիստ է նաեւ օրենքի նախատեսած պատիժը: Ըստ այդմ՝ եթե ավազակությունը կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով, զենքի օգտագործմամբ, ապա պատիժը վեցից տասը տարի ժամկետով ազատազրկումն է: Ութից տասնհինգ տարի ժամկետով ազատազրկում է սահմանվում, եթե ավազակությունը կատարվել է կազմակերպված խմբի կողմից, առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու նպատակով, առողջությանը ծանր վնաս պատճառելով:***



# Ավազակություն՝ կողոպուտի նպատակով

Ավազակային հարձակման դեպքը կատարվել է չորսուկես տարի առաջ: Յանցագործությունը բացահայտվեց, սակայն կասկածյալը հասցրել էր հեռանալ հանրապետությունից:

Յարուցված քրեական գործը կասեցվեց: Եվ ահա, հետեւողական աշխատանքի շնորհիվ կատարվածից տարիներ անց հետախուզման մեջ գտնվող Գեւորգ Յակոբյանը հայտնաբերվեց: «Մոռացել էր» նախկինում կատարած հանցագործության մասին եւ որոշել էր Ռուսաստանի Դաշնությունից վերադառնալ Յայաստան: Ինքը «մոռացել էր», իսկ իրավապահները՝ ոչ: Յայտնաբերվեց Բագրատաշենի սահմանային անցակետում եւ բերման ենթարկվեց ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք, այնտեղից էլ տեղափոխվեց քրեական հետախուզության գլխավոր վարչություն եւ ներկայացվեց նախաքննությունն իրականացնող մարմնին: Քրեական գործի վարույթը վերսկսվեց: Իսկ հիմա՝ ըստ էության:

Շիրակի մարզի բնակիչ Գեւորգ Յակոբյանը, մինչ ճակատագրական հանդիպումը, համաքաղաքացի Մարտիրոս Մուրադյանին չի ճանաչել: Այդ օրը, ուշ երեկոյան, նրանց թաղում էր հայտնվել այլ նպատակով. գնացել էր թաղի բնակիչներից մեկի տուն՝ պարտքի հետեւից: Պարտատերը, սակայն, տանը չէր, եւ Գեւորգը որոշեց նրան սպասել տան մոտ: Մարտիրոս Մուրադյանին հանդիպեց հենց այդ ժամանակ: Մուրադյանը ուզեց ճշտել՝ ճանաչո՞ւմ է երիտասարդին: «Դու Յովսեփի տղան չե՞ս»՝ հարցրեց ու դրական պատասխան ստանալով՝ հետաքրքրվեց, թե ինչն է այդ ուշ ժամին իրենց թաղում գտնվելու պատճառը: Իմացավ ու զրույցի բռնվեց հետը:

Մոտ մեկ ժամ Գեւորգը լսեց գինովցած Մարտիրոսի պատմությունները: Նախկինում դատապարտված Մարտիրոսը ճարտար լեզու ուներ, իսկ «նստած» լինելը ինքնավստահ էր դարձրել նրան, «բացել» լեզուն:

Յետո որոշեցին մտնել սուպերմարկետ, «տաքանալու» համար օղի, ուտելիք գնել: Դրամարկղի մոտ Գեւորգը նկատեց Մարտիրոսի դրամապանակի պարունակությունն, ու սատանան մտավ մեջը: Առաջարկեց մոտակա զբոսայգում մի-մի բաժակով ամրապնդել ծանոթությունը, ապա վերադառնալ ելման կետ: Անտեղյակ երիտասարդի բուն մտադրությանը՝ Մարտիրոսը հետեւեց նրան: Ու մինչ կռացած՝ նստարանին խմիչքը եւ ուտելիքն էր դասավորում, Գեւորգը նրա բաճկոնի գրպանից թռցրեց դրամապանակը: Մարտիրոսը հասցրեց բռնել նրա ձեռքը: Քաշքշուկ սկսվեց: Գեւորգը խփեց Մարտիրոսին, նա ընկավ, հետո Գեւորգը ոտքերով մի քանի հարված էլ հասցրեց ընկածին ու փախավ...

Կողոպտված ու արյունլվա տղամարդուն հիվանդանոց տեղափոխեցին պատահական մարդիկ. մի կերպ հասել էր փողոց ու փլվել նստարանին...

Մարտիրոս Մուրադյանի առողջությանը պատճառված վնասվածքները որակվեցին թեթեւ աստիճանի, իսկ նյութական վնասը խոշոր չափի էր՝ հարյուր քսանհինգ հազար դրամ:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական ու քննչական միջոցառումների շնորհիվ պարզվեց կասկածյալի ինքնությունը, նաեւ պարզվեց, որ մեկնել է հանրապետությունից: Մեկնումը նախապես էր որոշված, պարզապես մինչ այդ գնացել էր պարտքը վերցնելու: Իսկ հետո ամեն ինչ այլ ընթացք էր ունեցել:

**Յասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ**

# Բացահայտում են Վանաձորի ոստիկանները



Հանցագործությունների նախականխման, կանխման եւ բացահայտման ուղղությամբ ոստիկանության բոլոր ստորաբաժանումների ծառայողներն իրականացնում են շուրջօրյա ծառայություն, շրջագայություններ, ձեռնարկվում են բազմաբնույթ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Հունվարի 11-ին, ժամը 19.30-ի սահմաններում, Վանաձորի ոստիկանները օպերատիվ տեղեկություններ ստացան, որ Աղայան փողոցի մի տնից գողություն է կատարվում:

Անմիջապես կապ հաստատվեց դեպքի վայրի մոտակայքում ծառայություն իրականացնող օպերատիվ խմբերի հետ:

Ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախույզները դեպքի վայրում նկատեցին, որ չորս հոգի, գողոնով հանդերձ, «Մերսեդես Բենց» մակնիշի մեքենայով փորձում են փախչել: Ոստիկանները մեքենան կանգնեցրին Նարեկացու փողոցում:

Վանաձորցիներ Սամվել Հասանյանը, Արմեն Հարությունյանը, Գեւորգ Մանուկյանն ու Անդրանիկ Առաքելյանը, գողություն կատարելու կասկածանքով, բերման ենթարկվեցին ոստիկանության Տարոնի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

# Գողանալ օտարերկրացուց



Հունվարի 10-ին, ժամը 01.20-ին, ոստիկանության Երեւան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոնից Կենտրոնական բաժնում հաղորդում է ստացվել, որ մի օտարերկրացու տանը հյուրընկալած ոմն Արփինե նրա բաճկոնի գրպանից գողացել է 600 եվրո, 100 դոլար, 43 հազար դրամ եւ բանկային քարտ:

Ոստիկանության Կենտրոնական բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, պարզել են, որ գողությունը կատարել է 22-ամյա Արփինե Ա.-ն, որը հունվարի 11-ին Երվանդ Քոչարի փողոցից բերման է ենթարկվել բաժին եւ տվել խոստովանական բացատրություն:

Կատարվում է քննություն:

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

# Խաբել թոշակառուին



**Տարեց կինը, որն իր կենսաթոշակից զատ ստանում էր նաեւ Արցախյան ազատամարտում զոհված որդու համար նշանակված թոշակը, գուցե այդպես էլ չիմանար, որ իրականում պետք է ստանա ոչ թե 88 հազար դրամ, այլ՝ 90, եթե մի օր կենսաթոշակի չափի մասին տեղեկանքի կարիք չառաջանար:**

**Նորություն չէ, որ կենսաթոշակնպաստ բաժանող փոստային տեսուչները երբեք նման պահանջ չեն ներկայացնում, բայց ուրախությամբ են ընդունում թոշակառուների թողած մանրադրամը: Մարդիկ անգամ չեն մտածում, որ այդ թոշակն ու նպաստը բաժանող տեսուչն ընդամենը կատարող է եւ իրենց գումար հատկացնելու հետ ոչ մի կապ չունի, բայց նրանք, միեւնույն է, հենց կատարող-բաժանողին են շնորհակալ թոշակ-նպաստը ժամանակին ստանալու համար, ուստի ինչ-որ չգրված օրենքով իրենց պարտքն են համարում թոշակից նրան էլ բաժին հանել: Այս դեպքում տեսուչը ոչ միայն մանրադրամն էր ընդունել, այլեւ օգտվել էր տարեց կնոջ անուշադրությունից կամ գուցե տեսողության թուլությունից: Նա, փաստորեն, հաղորդում ներկայացրած կնոջը մի տարի 2 հազար դրամ պակաս էր վճարել: Անգամ կամավոր թողած 500 դրամից չէր հրաժարվել: Կինը խաբեությունը բացահայտելուց հետո դիմել էր ոստիկանության Մուշի բաժին:**

**Յարուցված քրեական գործով նախաքննություն է կատարվում:**

**Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ**

# Լվացքի մեքենա էր գողացել



*Ավանի Իսահակյան թաղամասի 4-րդ շենքի բնակարաններից մեկում միայնակ ապրում է 71-ամյա մի տղամարդ: Նրան երբեմն այցելում էր մտերիմը՝ հոգ տանելու նպատակով: Ամանորի առիթով այցելեց հունվարի 4-ին եւ գողանալով տարեցի լվացքի մեքենան՝ տաքսիով տարավ Վերնիսաժ՝ վաճառելու:*

*Սպասարկվող տարածքին տիրապետող, բնակիչների խնդիրներին տեղյակ համայնքային ոստիկանի աչքից չեն կարող վրիպել նման դեպքերը, ինչպես չվրիպեց Իսահակյան թաղամասը սպասարկող համայնքային ոստիկանի աչքից:*

*Օպերատիվ տեղեկությունների ուսումնասիրման արդյունքում Ավանի ոստիկանները պարզեցին կատարողի ինքնությունն ու բնակության վայրը:*

*Յունվարի 11-ին Խուդյակովի փողոցում ապրող Մարտիրոս Մարգարյանը ոստիկանության Ավանի բաժանմունքում էր: Նա ոստիկաններին հայտնեց եղելությունը:*

*Ձեռնարկվում են միջոցառումներ գողոնը հայտնաբերելու ուղղությամբ:*

*Կատարվում է քննություն:*

# Բնակարանային գողություն Արտաշատում



Յունվարի լույս 5-ի գիշերը Արտաշատի բնակիչ, 72-ամյա մի տղամարդ ոստիկանության տարածքային ստորաբաժանումում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում տվեց: Մի քանի ժամ էր բացակայել տնից ու վերադառնալով՝ բնակարանը տակնուվրա էր գտել: Ըստ տուժողի՝ տնից հափշտակել էին տեսաձայնագրող սարք, չիրկիզվող պահարան, ոսկյա զարդեր, 300 հազար դրամ, 200 եվրո:

Ահազանգով մեկնած Արտաշատի ոստիկաններն ու քննիչները նախ պարզեցին, որ տան եվրոպատուհաններից մեկը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին:

Քրեական գործ հարուցվեց, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ սկսվեցին:

Յանցագործության բացահայտմանը միացան նաեւ ոստիկանության Արարատի մարզային վարչության ծառայողները: Յամատեղ աշխատանքի արդյունքում պարզվեց բնակարանագողության մեջ կասկածվողի ինքնությունը: Քրեական հետախույզների տեսադաշտում հայտնված 25-ամյա Յակոբ Մխիթարյանը, որը Արտաշատի բնակիչ է, հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Արտաշատի բաժին:

Երիտասարդին ոստիկանները ներկայացրել են նախաքննությունը վարող Արարատի մարզային քննչական վարչություն:

Իրավապահները հայտնաբերել են չիրկիզվող պահարանը: Միջոցառումները շարունակվում են գողոնի մյուս մասը հայտնաբերելու ուղղությամբ:

Կատարվում է նախաքննություն:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Բռնվեց երեք տարի անց



2015 թ. հունվարի 28-ին Տաշիր քաղաքի երկու առանձնատնից գողություն էր կատարվել: Գողոնը ոսկյա զարդեր էին ու փող: Տուժողներից մեկին պատճառված նյութական վնասը մեկ միլիոն դրամի էր, մյուսինը՝ 750 հազարի:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Տաշիրի քրեական հետախույզները օպերատիվ տեղեկություն ձեռք բերեցին, որ գողոնը Վանաձոր քաղաքի Պարույր Սեւակի փողոցի բնակարաններից մեկում է: Բնակարանը պատկանում էր 42-ամյա Արծրուն Սարգսյանին:

Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ նշված բնակարանում խուզարկություն կատարվեց, բայց ոչինչ չհայտնաբերվեց: Քրեական հետախույզները, սակայն, կասկածներ ունեին, որ Տաշիրում կատարված գողությունների հետ Արծրուն Սարգսյանը, այնուամենայնիվ, առնչություն ունի:

Մինչ իրավապահները փորձում էին հիմնավորել կասկածները, ապացույցներ ձեռք բերել, Արծրուն Սարգսյանը հեռացավ հանրապետությունից: Հանցագործության մեջ կասկածվող անձի գտնվելու վայրը անհայտ լինելու հանգամանքով քրեական գործի վարույթը կասեցվեց:

Գողություններից երեք տարի անց Արծրուն Սարգսյանը, թերեւս մտածելով, որ իր նկատմամբ կասկածները փարատվել են, վերադարձավ Վանաձոր: Բայց քրեական հետախույզների ու վարույթն իրականացնող քննիչների համար նա կասկածյալների ցուցակում էր: Անցած տարիներին գողությունները բացահայտելու ուղղությամբ մի շարք վարկածներ էին առաջ քաշվել ու հերքվել, կասկածյալների ալիբիներն էին ստուգվել եւ այլն:

Արծրուն Սարգսյանը վերադարձավ Վանաձոր ու, բացատրական աշխատանքների արդյունքում, ներկայացավ ոստիկանություն: Այլընտրանք չուներ. խոստովանեց՝ վերհիշելով երեք տարվա վաղեմության դեպքերը:

Ընկերոջ հետ հանդիպելու նպատակով էր այդ օրը, երեկոյան, Տաշիր գնացել, բայց, պարզվել էր, որ նա քաղաքում չէ: Մտահոգ էր. վարկային պարտավորություններ ուներ, իսկ վարկը մարելու փող՝ ոչ: Ընկերոջից պարտքով փող խնդրելու համար էր հասել Տաշիր: Իր ասելով՝ հույսը կտրած, մեքենայով շրջել էր Տաշիրում, ու ծնվել էր գողանալու միտքը: Թիրախ ընտրած երկու անլույս տներն էլ մտել էր ցանկապատի վրայով անցնելով ու պատուհանի փեղկը լինգի օգնությամբ բացելով:

Հափշտակած ոսկյա զարդերը վաճառել էր, գումարն ավելացրել գողոն-փողին, վարկի տվյալ ամսվա վճարը մարել էր, իսկ մնացած փողով մեկնել էր արտագնա աշխատանքի:

Գողությունների փաստով հարուցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Նախաքննությունը շարունակվում է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

# Գողություն արժեփ սարքերից



Ոստիկանության Նոր Նորքի բաժնում գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Թիրախը Նոր Նորքի 6-րդ զանգվածի Բադալ Մուրադյան փողոցում տեղադրված սրճեփ սարքն էր: Կոտրել էին սարքի դուռն ու հափշտակել մետաղադրամներով պահոցը: Նախնական հաշվարկով՝ տուժողին պատճառվել էր 180 հազար դրամի գույքային վնաս:

Նոր Նորքի ոստիկանները նախ պարզեցին, որ գողությունը երկուսով են արել, գործել են ձեռնոցներով, դեմքերին՝ բժշկական դիմակներ: Հայտնի դարձան նաեւ մեքենայի մակնիշն ու համարանիշը, որով կասկածվողները գնացել էին դեպքի վայր:

Գիշերը Նոր Նորքում ուժեղացված ծառայություն իրականացնող քրեական հետախույզների տեսադաշտում հայտնվեց փնտրվող մեքենան, որը տեղափոխվեց ոստիկանության Նոր Նորքի բաժնի հատուկ պահպանվող տարածք: Վարորդն էլ, բնականաբար, բերման ենթարկվեց: 25-ամյա Արման Հովհաննիսյանի մեքենայի խուզարկությամբ հայտնաբերվեցին բժշկական դիմակներ, ձեռնոցներ, պտուտակահաններ, մետաղական իրեր...

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ քննչական գործողությունների արդյունքում ի հայտ եկան նոր հանգամանքներ: Պարզվեց, որ Արման Հովհաննիսյանն ու դեռեւս ինքնությունը չպարզված մի երիտասարդ մետաղադրամներ են գողացել Նոր Նորքի տարբեր փողոցներում տեղադրված սրճեփ սարքերից:

Մյուս անձի ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու միջոցառումներ սկսվեցին: Նոր Նորքի քրեական հետախույզները վստահ էին, որ նրա հայտնաբերմամբ նոր հանցադրվագներ կբացահայտվեն: Չէին չսխալվում: Ոստիկանության Նոր Նորքի բաժնից օպերատիվ խումբ մեկնեց Չարենցավան: Հետքը գտել էին: Օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ Արման Հովհաննիսյանը սրճեփ սարքերի մետաղադրամների գողություններն արել է Չարենցավանի բնակիչ Տիգրան Հայրապետյանի հետ: Նա հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Նոր Նորքի բաժին:

Ոստիկանները Տիգրան Հայրապետյանին եւս ներկայացրին քննչական բաժին: Արդյունքում՝ նոր հանցադրվագներ բացահայտվեցին. գողության եւ գողության փորձերի թիվը հասավ տասնչորսի:

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

**Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ**

# Հետեւողական պայքար ապօրինության դեմ



Ոստիկանությունը ամենօրյա հետեւողական պայքար է մղում ապօրինի պահվող զենք-զինամթերքի հայտնաբերման ուղղությամբ: Եվ նշանակություն չունի ոստիկանների օպերատիվ տեսադաշտում հայտնված անձի ով լինելը:

Հունվարի 12-ին ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչության ծառայողները Երեւանի Հրաչյա Քոչարի եւ Վաղարշյան փողոցների խաչմերուկից, մեքենաներով հանդերձ, բերման ենթարկեցին Արտյոմ Հարությունովին եւ նրան ուղեկցող անձանց՝ ապօրինի զենք-զինամթերք ու սառը զենք պահելու, կրելու կասկածանքով: Գրիգորյանի եւ Արթուր Մադոյանի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեցին 23 եւ 21,5 սմ երկարությամբ դանակներ: Ռուսական համարանիշով «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայի զննությամբ հայտնաբերվեց 5,45 մմ տրամաչափի 20 փամփուշտով լիցքավորված փամփշտատուփ, 12 մմ տրամաչափի 6 եւ 5,45 մմ տրամաչափի 30 փամփուշտով լիցքավորված երկու հրազեն: Հայկական համարանիշով «Տոյոտա»-ի զննությամբ եւս հայտնաբերվեց երկու հրազեն եւ 12 մմ տրամաչափի 7 փամփուշտ:

Միջոցառումները շարունակվում են:

**Մ. Ս.**

# Գողություն խանութներից



Հունվարի 11-ի գիշերը ոստիկանության Իջեւանի բաժնում օպերատիվ կառավարման կենտրոնից հաղորդում ստացվեց, որ Կիրանց գյուղի խանութից գողություն է կատարվել:

Դեպքի վայր մեկնած օպերատիվ խումբը պարզեց, որ ժամը 2.00-ի սահմաններում անհայտ անձը տեխնիկական միջոցների գործադրմամբ կոտրել է խանութի դռան փականը եւ գողություն արել:

Ոստիկանության Իջեւանի բաժնի քրեական հետախույզները, Տավուշի մարզային վարչության եւ Դիլիջանի բաժնի ծառայողների հետ համատեղ, դեպքից ժամեր անց, Դիլիջանի Թբիլիսյան փողոցից, մեքենայով հանդերձ, ոստիկանության Դիլիջանի բաժին բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ Արման Տոնոյանին, Արմավիրի մարզից՝ Սերյոժա Ստեփանյանին, Մանվել Հովհաննիսյանին եւ մեքենայում գտնվող եւս մեկ ուղեւորի:

Պարզվեց, որ նշված գողությունը կատարել է Ստեփանյանը, իսկ Տոնոյանը խանութի տարածքն էր հսկել: Ստեփանյանը ոստիկաններին ներկայացրեց 285 տուփ ծխախոտ:

Օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ անցած տարվա դեկտեմբերին Անդրանիկ Տոնոյանը կատարել է եւս երկու գողություն: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էր Տավուշի մարզի գյուղերից մեկի խանութի դուռն ու գողացել 30 հազար դրամ, խմիչք, կենցաղային իրեր: Դիլիջանում խանութ էր մտել նույն եղանակով. գողացել էր 40 հազար դրամ, ծխախոտ, խաղալիքներ, սպասք, օծանելիք ու կոնֆետ:

Արման Տոնոյանը, Սերյոժա Ստեփանյանը եւ Մանվել Հովհաննիսյանը կալանավորված են:

Կատարվում է նախաքննություն:

**Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ**

# Հայտնաբերվել են հետախուզվողներ




Ոստիկանության Բագումի բաժնի ծառայողները, համագործակցելով Բագումի անձնագրային բաժանմունքի աշխատակիցների հետ, հունվարի 18-ին անձնագրային բաժանմունքում հայտնաբերել եւ բաժին բերման են ենթարկել ՌԴ իրավապահների կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 158 հոդվածի 2-րդ մասի Ա եւ Բ կետերի (մանր հափշտակություն) մեղադրանքով 2018 թ. մարտի 28-ից փորձաշրջանի կիրառմամբ պայմանական դատապարտված, հետախուզվող, 20-ամյա Արտյոմ Գ.-ին:

◆

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների բացատրական աշխատանքների շնորհիվ հունվարի 18-ին Սոչի-Երեւան չվերթի ինքնաթիռով Հայաստան վերադարձել եւ կամավոր բաժին է ներկայացել 35-ամյա Հաբեթ Ս.-ն, որը 2018 թ. սեպտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Ստեփանավանի բաժնի քրեական հետախույզների բացատրական աշխատանքների շնորհիվ հունվարի 18-ին ինքնակամ բաժին է ներկայացել 28-ամյա Տարոն Ն.-ն, որը 2017 թ. նոյեմբերից հետախուզվում էր քրեական օրենգրքի 177 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի մեղադրանքով՝ դատարանի կողմից նշանակված պատժի կրումից խուսափելու համար:

◆

Հունվարի 19-ին ոստիկանության ՔՀԳ վարչության եւ Հայաստանում Ինտերպոլի ազգային կենտրոնական բյուրոյի համատեղ օպերատիվ խմբի ծառայողները Դյուսելդորֆ-Մոսկվա-Երեւան չվերթով Հայաստան են տեղափոխել 33-ամյա Արմեն Հ.-ին, որը 2016 թ. հոկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Հունվարի 19-ին ոստիկանության ՔՀԳ վարչության օպերատիվ խմբի ծառայողները Աստանա-Մոսկվա-Երեւան չվերթով Հայաստան են տեղափոխել 45-ամյա Աշոտ Ա.-ին, որը 2017 թ. հոկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 179 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի (խոշոր չափերով յուրացում կատարելը) մեղադրանքով:

◆

Հունվարի 19-ին ոստիկանության Արաբկիրի բաժնի ծառայողները Երեւանի Գրիգոր Լուսավորչի փողոցից բերման են ենթարկել 26-ամյա Հրաչ Ա.-ին, որը ոստիկանության Բագումի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 176 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի (կողոպուտը) եւ 235 հոդվածի 4-րդ մասի (ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելը, իրացնելը, պահելը, փոխադրելը կամ կրելը) մեղադրանքներով:

◆

Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները, իրացնելով ստացված օպերատիվ տվյալները, հունվարի 21-ին Աբովյան փողոցից բերման են ենթարկել 1990 թ. ծնված Ադամ Բ.-ին, որը ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 176 հոդվածի (կողոպուտը) 2-րդ մասի 2-րդ կետի մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:



- «Վերջին ...ը» (ֆիլմ)
- Թանաքածուկ / Արագիլ
- Նիկողայոս ...
- Բենի ...
- ... Մալյան
- «... Մարիա»
- Կոմս դը լա Ֆեր / Քաղաք, Անգլիա
- «... թերթ» / Սարմենի օրգան
- Գրեգորի ...
- Շալյապին / Ռուս ծովագնաց
- Ծագումնաբանություն
- Ժողովուրդ
- Պահակետի զինվ. / Ծակոտկեն իր
- Վերդի, օպերա / Ճապոնական գիր
- Շումեր. աստված
- «... Համիլտոն»
- Դաղձ
- «Գեռնիկա»
- Ճապոն. բալենի / Ծերացած
- Զբոսայգի / Ռազմ. քարանետ գործիք
- Վրաց բազուկի / Չեփած
- Ալֆոնս ... / Գավառ, Մեծ Հայք
- Գետ, Թաիլանդ
- Դանակ սրելու քար
- Կուրիլյան կղզի
- Հայկ. հոգեւոր երգ
- Պատմ. ժամանակաշրջան
- 18-19 դդ. ճապոն. նկարիչ
- Քթոց
- Հայ ազնվականութ.
- Պարսից արքա
- Ֆիլիպիններ / ... Յովնաթան
- Փոքր մոլորակ
- Հերա
- Նահանգ, ԱՄՆ
- Փետրվար, մարտ / Ջրավար, Բորոդինո
- Վարչատարածք, Հին Հայաստ.
- Մուք
- Ծնողների ժառանգը
- Հնում արեւելյան պաշտոնյա
- ԱՊՀ ազգություն
- Չինաստանի դրամ / ... Վեսպուչի
- Անջատիչ սարք
- Սահմանամերձ զորամաս
- «Մարտին ...»
- Հեղուկ վառելանյութ
- %
- Եռակայմ առագաստանավ
- Քիմ. տարր / Ծառերով երիզված ճանապ.
- Քաջ ...
- Իսպան. թենիսիստ
- Ողկույզներ
- Երաժշտ. եղանակ / Մազուրկա
- Ժամ. հնգամարտի ասպետ
- Շինանյութ / «Եվ ...ից երկար է տեւում օրը»
- Էդսոն Արանտես դո Նասիմենտո
- Կողբացի, «... աղանդոց»
- ... Ավետիսյան
- «Ես եւ ...»
- Հացահատիկ
- Ս. Պետերբուրգի գետը
- Տարի
- ... Դումբաձե
- Ժող. լարավոր նվագարան
- Կողպեք / Լույսի ուժի հին միավ.
- ... Պաչինո
- Թոնրի հաց
- Եմեն
- Հռոմ. Դիոնիսոսը / Կիլիմանջարո
- Կրակապաշտ / Մակաբույծ միջատ
- Բայրոն, պոեմ / Ուսումն. ժամ
- «Դավիթ» քանդակ / Ամերիկ. ֆիզիկոս
- Ռուսա, Արգիշտի
- ... Դոլուզյան (ծանրամ.)
- Ծրար / Նարդի
- Մոլախոտ
- Անգլիացի փիլիսոփա

## Ուշադրություն

### Հարգելի քաղաքացինե՛ր

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

**ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

## Աստղագուշակ

25.01 - 31.01



**Խոյ** - Լավ փոփոխություններ ընտանիքում, աշխատանքում, հետաքրքիր հանդիպումներ:

**Ցուլ** - Համատեղ գործեր կձեռնարկեք հարազատների հետ: Հնարավոր են կոնֆլիկտներ ղեկավարության կամ կարեւոր մարդկանց հետ:

**Երկվորյակ** - Սպասում է բուռն ֆինանսական գործունեություն: Կարճատեւ գործնական ուղեւորություններ են սպասում:

**Խեցգետին** - Հետաքրքիր ու անսպասելի միջոցառման կմասնակցեք: Կոնֆլիկտի մեջ չներքաշվեք:

**Առյուծ** - Հետաքրքիր իրադարձության մասնակից կլինեք: Անսպասելի փոփոխություններ են սպասվում տանը:

**Կույս** - Զբաղվեք ձեր ֆինանսական խնդիրներով: Սեփական հնարավորությունները մի գերագնահատեք:

**Կշեռք** - Հաջողություններ կունենաք անձնական գործերում: Շահավետ արդյունքների կհասնեք:

**Կարիճ** - Գործերը կարգավորելու մեծ հնարավորություն կունենաք: Կարեւոր հանդիպում կունենաք ղեկավարության հետ: Խուսափեք կոպտություններից:

**Աղեղնավոր** - Աշխատավայրում կատարվող դեպքերին սառնասրտորեն մոտեցեք: Անսպասելի նորություններ կստանաք արտերկրից:

**Այծեղջյուր** - Գործնական հանդիպումներ կունենաք: Նոր, հետաքրքիր հարաբերություններ կհաստատեք:

**Ջրհոս** - Մի քանի հարց լուծելու անհրաժեշտություն կառաջանա: Խնդիրներ կունենաք ազգականների հետ:

**Ձուկ** - Ֆինանսական բարելավում է սպասում, սակայն շռայլություններ մի արեք: Հաջող ուղեւորություններ կունենաք:

## Փորձեք լուծել

**Խնդիր N1**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից**

**Խնդիր N2**



**Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից**

**Նախորդ խնդիրների պատասխանները**

Խնդիր N1 1.b4-c5 d6:d2 2.a1:g7x

Խնդիր N2 1.h4-g5 h6:f4 2.d4-c5 d6:d2 3.a1:e5x

Պատրաստեց
**Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ**
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

## Նախորդ համարի սկանվորդի պատասխանները



«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աբաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 24.01.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6870:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: